

Հավելված 3.5. Ուսումնական դասընթացի կադապար
(“Դարասկզբի գրական ավանդները ժամանակակից
գրականության մեջ” ուսումնական առարկայական ծրագրի
օրինակով)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՐԱՍԿԶԲԻ ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

031000 ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հաստատված է

Քննարկված է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

<< Հայոց լեզվի և գրականության >>

ամբիոնի 2012 թ. _____ N ____ նիստում:

Ամբիոնի վարիչ՝ *Վաչագան Վարազդատի Ավագյան*

(ստորագրություն)

Հեղինակ՝ *Վահան Արշակի Աղաբաբյան*

(ստորագրություն)

6. Արզումանյան Ս, Սովետահայ վեպը, գիրք 1, Երևան, 1967, գիրք 2, Երևան, 1981, գիրք 3, Երևան, 1985, գիրք 4, Երևան, 1990:
7. Արզումանյան Ս, Արդի հայ վեպը, գիրք 5, Երևան, 2004:
8. Գաբրիելյան Վ., Դանիել Վարուժան, Երևան, 2009:
9. Գրիգորյան Կ., Վահան Տերյան, Երևան, 1983:
10. Թամրազյան Հր., Վահան Տերյան, Երևան, 1985:
11. Թամրազյան Հր., Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, 1986:
12. Թամրազյան Հր., Եղիշե Չարենց, Երևան, 1987:
13. Թամրազյան Հր., Սիամանթո, Երևան, 2003:
14. Իշխանյան Ռ., Բակունցի կյանքն ու արվեստը, Երևան, 1974:
15. Իսահակյան Ավ., Հայդուկի երգեր, Երևան, 1990:
16. Կիրակոսյան Վ., Ռուբեն Սևակ, Երևան, 1979:
17. Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979:
18. Մկրյան Մ., Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, 1981:
19. Պապոյան Ա., Ծաղկած փշալարերի հայ արձակը, Երևան, 1999:
20. Սուրխաթյան Հ., Հետհոկտեմբերյան հայ գրականություն, Երևան, 1929:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

1. www.freebooks.do.am
2. www.nla.am
3. www.lib.ru
4. www.akumb.am
5. www.mathnet.am
6. www.hay-em.do.am
7. www.wikipedia.org
8. www.diplom.am

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտությունը՝ Հայոց լեզու և գրականություն

Դասընթացի անվանումը՝ 0302/ B 39 Դարասկզբի գրական ավանդները ժամանակակից գրականության մեջ

Դասընթացի տեսակը՝ Կամընտրական /պարտադիր, կամընտրական/

Դասընթացի մակարդակը՝ Բակալավրիատ

Ուսանողների թիրախային խումբը՝ Հայոց լեզու և գրականություն, IV կուրս

Անհրաժեշտ նախապայմաններ՝ Նոր շրջանի գրականության պատմություն, Նորագույն շրջանի գրականության պատմություն:

ECTS կրեդիտների քանակը՝ 4 ECTS կրեդիտ

Ընդհանուր ժամաքանակը՝ -120 ժամ

Դասախոսություն՝ - 48 ժամ,

Գործնական՝ - ժամ

Սեմինար՝ -16 ժամ

Լաբորատոր՝ - ժամ

Ինքնուրույն՝ - 56 ժամ

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

(2 ժամ)

Հայոց բազմադարյան գրականությունը լի է ազգային ողբերգության էջերով: Սակայն ամենաողբերգականը 1894-1923 թվականների պատմությանը նվիրված էջերն են, որտեղ ժողովրդի ճակատագրի յուրահատկությունը դրսևորվում է ամբողջությամբ:

Առաջին աշխարհամարտը դառնում է Թուրքիայի ծրագրերի իրականացման գագաթնակետը: 1915-1918 թթ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում բնաջնջվում է շուրջ մեկուկես միլիոն արևմտահայ: 1922 թ. սեպտեմբերին տեղահանվում և Իզմիրի ծովախորշում ջրախեղդ է արվում կամ թրատվում չորս հարյուր հազար հայ:

Այսպիսով, մոտավոր հաշվարկներով, 1894-1922թթ. Թուրքիան ոչնչացրել է շուրջ երկու միլիոն հայ բնակչություն: Սա է 20-րդ դարի մարդկության պատմության առաջին ամենամեծ ցեղասպանությունը:

Նպատակ չունենալով անդրադառնալ Թուրքիայի կառավարողների անմարդկային գործողությունների պատմությանն ու միջազգային ոճրագործների չարանենգ արարքների ողջ նկարագրին՝ ցանկանում ենք ներկայացնել հայոց մեծ վիշտը գրականության այքերով, այսինքն՝ հայ գրականության արձագանքը այդ ողբերգական իրադարձություններին և թե ինչպես է գրականության մեջ դրսևորվում Մեծ Եղեռնի պատմությունը:

Հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգությունը անհնար էր մատնել մոռացության: Չնայած այն փաստին, որ անհատի պաշտամունքի տարիներին արգելված էր անդրադառնալ ազգային թեմաներին հայ գրողները, երբեմն Հայրենական պատերազմի քողի տակ, երբեմն ստեղծագործությունների տողատակում, բայց, այնուամենայնիվ, անդրադառնում էին մոտ մեկ և կես միլիոն հայերի ջարդին:

1943-ին Գեղամ Սարյանը գրում է «Դեպի կառափնարան» բալլադը և նվիրում Կոմիտասի հիշատակին: 1945 թվականին տպագրվում է Եղեռնը պատկերող նոր ժամանակների առաջին և ցնցող գրքերից մեկը՝ ապագա վաստակաշատ բանասեր, Հրաչյա Աճառյանի սան և հրաշալի գիտնական Գառնիկ Ստեփանյանի «Մղձավանջային օրեր» գիրքը:

1950 թվականին լույս է տեսնում մեր ազնիվ ու ազնվական գրողներից մեկի՝ Խաչիկ Դաշտենցի «Խողեղան» վեպը: 50-ական թվականների վերջերին լույս են տեսնում Միսաք Մեծարենցի, Միամանթոյի, Դանիել Վարուժանի ժողովածուները, այսինքն՝ Սովետական Հայաստանը դռները բացում է արևմտահայ գրականության առաջ: Ոչ միայն գրականության, այլև թեմայի, նյութի, առարկայի:

1959 թվականին լույս է տեսնում Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը: Սա հայոց Եղեռնի թեմայի նոր արժարժումն էր՝ ընդլուզված Կոմիտաս վարդապետի կյանքի և ճակատագրի պատմությանը: Բանաստեղծը Եղեռնի թեման մի նոր աստիճանի, բանաստեղծական խոսքի նոր ուժի ու պատկերավորության բարձրացրեց «Եռաձայն պատարագ» եռամաս պոեմում, մի հսկայական հզոր սիմֆոնիա, բազմաձայն աղաղակ, համազգային-համահայկական միաշունչ խոսք:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ

1. Աղաբաբյան Ս. , Արդիականություն և գրականություն, Երևան, 1965:
2. Աղաբաբյան Ս., Գրական հերկերում, Երևան, 1974:
3. Աղաբաբյան Ս., Դասականները և ժամանակակիցները, Երևան 1986:
4. Աղաբաբյան Ս., XX դարի հայ գրականության զուգահեռներում, Գիրք Ա, Երևան, 1983, Գիրք Բ, Եր. 1984:
5. Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, Երևան, 1986:
6. Ավետիսյան Զ., Նորագույն գրականության զարգացման միտումները, Երևան, 2002:
7. Ավետիսյան Զ., Գրական ստեղծագործության հոգեբանություն, Երևան, 2011:
8. Գաբրիելյան Վազգեն, Մփյուռքահայ գրականություն, Երևան, 2008:
9. Դավթյան Ռ. , Հայոց Մեծ եղեռնը հայ գրականության մեջ, Երևան, 2005:
10. Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, 1975:
11. Թամրազյան Հ., Սովետահայ գրականության պատմություն. հ. 1, Եր, 1964, հ.2, Երևան. 1965:
12. Թամրազյան Հ., Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1980:
13. Հայ նոր գրականության պատմություն, հ. V, Եր. 1979:
14. Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ, Գիրք Ա, Երևան, 2003, Գիրք Բ, Երևան, 2007, Գիրք Գ, Երևան, 2010:
15. Քալանթարյան Ժ., Անդրադարձներ, Երևան, 2002:

ՕԺԱՆԴԱԿ, ԼՐԱՅՈՒՑԻՉ

1. Աթաբեկյան Ս., Ակսել Բակունց, Երևան, 1996:
2. Աղաբաբյան Ս., Ակսել Բակունց, Երևան 1963:
3. Աղաբաբյան Ս., 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք 1, Երևան, 1983, գիրք 2, Երևան, 1984:
4. Արիստակեսյան Ա., Ջապել Եսայան, Երևան, 1965:
5. Արիստակեսյան Ա., Պարույր Սևակ, Երևան, 1984:

- XIX դարավերջի և XX դարասկզբի կոտորածների արձագանքները Ղ. Վարուժանի ստեղծագործություններում:
- Եղեռնի թեման Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում:
- Գուրգեն Մահարու «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին» ինքնակենսագրական վեպը:
- Գուրգեն Մահարու «Նախօրյակին» պատմվածաշարը:
- Ազգային-ազատագրական պայքարի անդրադարձները Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքում:
- Կորցրած հայրենիքի թեման Հրաչյա Քոչարի «Նահապետ» վիպակում:
- Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը:
- Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Հովհաննես Շիրազի ստեղծագործություններում:
- Կորցրած հայրենիքի թեման Հրաչյա Քոչարի «Կարոտ» վիպակում:
- Անհատի պաշտամունքի տարիների սահմանափակումները, կաշկանդումները և դաժանությունները Մկրտիչ Արմենի «Պատվիրեցին հանձնել ձեզ» ժողովածուում:
- Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծություններում:
- Անհատի պաշտամունքի տարիների սահմանափակումները, կաշկանդումները և դաժանությունները Անահիտ Սահինյանի «Կարոտ» վեպում:
- Անհատի պաշտամունքի տարիների սահմանափակումները, կաշկանդումները և դաժանությունները Վահրամ Ալազանի «Տառապանքի ուղիներով» վիպակում:
- Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպում:
- Ազգային-ազատագրական պայքարի անդրադարձները Սերո Խանգաղյանի «Գարեգին Նժդեհ» պատմավեպում:
- Անհատի պաշտամունքի տարիների սահմանափակումները, կաշկանդումները և դաժանությունները Սուրեն Ղազարյանի «Դա չպետք է կրկնվի» վեպում:
- Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Պարույր Սևակի պոեմներում:
- Ազգային-ազատագրական պայքարի անդրադարձները Սերո Խանգաղյանի «ԱՆդրանիկ» պատմավեպում:

1956-ից ի վեր, մանավանդ 1965 թվականի ապրիլի 24-ի հայտնի դեպքերից, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հայերեն հրատարակությունից և Օիժենակաբերդում Եղեռնի հուշարձանի բացումից հետո գրվել են բազմաթիվ գրքեր հայկական կոտորածների, Հայոց Մեծ եղեռնի, եղեռնի գոհ մեր մեծ մահատակների՝ Կոմիտասի, Միամանթոյի, Դանիել Վարուժանի և ուրիշների մասին, գրվել են տասնյակ պատմավեպեր, հուշագրական գրքեր և այլն, բայց դրանք հիմնականում շատ բան չեն ավելացնում թեմայի դասական իրագործումներին:

Հայոց Մեծ եղեռնը դժբախտաբար շարունակվում է, շարունակվում է, որովհետև իրոք «Արդարության Առավոտը դաժանորեն հեռու է», հալածված ու գրկված ազգերի հատուցման ժամը՝ աներևույթ ու աննշմարելի: Շարունակվում է և գրակա-նությունը: Հայոց Մեծ եղեռնի շուրջ ստեղծված մեծածավալ գրականությունը պատմական ճշմարտությունը ցույց տալուց և հաստատելուց գատ փաստում է մի շատ կարևոր իրողություն, այն, որ թուրքը միշտ էլ մնում է թուրք, և ոչ մի քաղաքակրթություն չէ գորու չէ նրան փոխելու, որովհետև բարբարոս, վայրենի, զագանային և անասնական կերպն ու էությունը նրա մեջ դրված են ի սկզբանե և ի վերուստ, հետևաբար՝ ընդմիշտ...

Առարկայի ծրագրի շրջանակներում քննության կառնենք նաև 20-30-ական թվականների հասարակական-քաղաքական կյանքը և այդ իրադարձությունների արտացոլումը հայ գրականության մեջ: 30-ական թվականներին մեր գրականության մեջ նշանակալի աշխուժություն ապրեց ինքնակենսագրական վեպը: Դրանց ծնունդը ուներ գրական-հասարակական հիմնավոր պատճառներ: Գրական ընթացքի մեջ էին մարդիկ, որոնք անցել էին կյանքի մեծ ճանապարհ, որոնց կյանքը սերտորեն կապված էր ժողովրդի պատմության մի շարք սոցիալ-քաղաքական երևույթների հետ, ավելի ճիշտ մի կյանքի մեջ արտացոլվում էր նաև մի ժողովրդի պատմական բախտը, սերունդների պատմական բախտի գեղարվեստական տարեգրությունը, այսպես կարելի է որակել այդ վեպերի բովանդակությունը: Նրանցից յուրաքանչյուրը բերում է մի ուրույն աշխարհ, իր տեսած ու ապրած Հայաստանի, իր սերնդի դատը ճակատագրի պատկերը, որի շնորհիվ էլ նրանց կյանքի պատմությունը ձեռք է բերում նաև հասարակական հետաքրքրություն:

Արդեն 1930-ական թվականների կեսերից հալածանքներն ու բռնություններն այնպիսի չափեր ընդունեցին, որ այլևս կասկած չէր մնում «պետական մասշտաբային արշավի» մասին: Արշավ գրականության դեմ, ազատ ու համարձակ խոսքի դեմ, ի վերջո՝ անհատ գործերի դեմ: Գրականությունն ու արվեստը, ամբողջ մշակույթը, մամուլը պետական օրգանները առան արցանների մեջ: Խաթարվեցին մարդկային առօրյա հրաբերությունները, սոցիալական ու քաղաքական ճնշումները դարձան կենցաղ:

Տխուր ճակատագրի վիճակից անխառն երգիծաբան, Պարոնյանի և Օտյանի ավանդները շարունակող Լեռ Կամսարին: Ապա հաշվեհարդար տեսան Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Զապել Եսայանի դեմ, արտրվեցին Մահարին, Արմենը, Ալազանը, Նորենցը և էլի շատ գրողներ ու մտավորականներ: Միբիդյան «ծաղկած փշալարերի» ետևում, սառցեղեն պայմաններում շուրջ երկու տասնամյակ բանտված մնացին արքայական գրողների գեղարվեստական շատ ծրագրեր ու մտահղացումներ:

«Բանտային արդյունաբերություն» արտահայտությունը Ալ. Սուլժենիցինին է «ծաղկած փշալարերը»՝ Գուրգեն Մահարունը: Երկուսն էլ դիպուկ են դիտել Ստալին-

նի ու նրա կամակատարների բռնատիրական վարչակարգի էությունը և իրենց տա-
ղանդավոր ստեղծագործություններում մերկացրել տոտալիտարիզմի մարդատյաց
քաղաքականությունը:

Այս քաղաքականության գեղարվեստական արտացոլման առաջնությունը, հայ
գրականության մեջ, պատկանում է Եղիշե Չարենցին, որը բազմաթիվ բանաստեղ-
ծություններում և չափածո տարբեր ժանրի գործերում, իրեն հատուկ վարպետու-
թյամբ, ցույց տվեց, թե ինչ հակամարդային ու անբարո հետևանքներ կարող է ունենալ
«Արեգնացյալ կացնի» կամ «Արյունալիճ մայրամուտի» գործելակերպը, և թե ինչպես
են հայոց մեծ անհատները «ընկնում, սուզվում հանկարծ եղերական միգում»:

«Վերակառուցումը» պարզեց հայ գրողների մի նշանակալից մասի անճարա-
կությունը: Եթե ռուս հեղինակներից շատերը՝ Ալ. Բեկ, Վ. Գորսման, Ա. Ռիբակով, Վ.
Աստաֆև և ուրիշներ, իրեն ձեռագրերը հանեցին դարակներից և, տպագրելով՝
հանձնեցին ընթերցողներին, մեր գրողների մի մեծ խումբ դատարկաձեռ ներկայա-
ցավ գրականասեր հասարակությանը: Ընդ որում՝ ռուս գրողների քսան-քսանհինգ
տարվա վաղեմություն ունեցող երկերը «վերակառուցման» հետ հնչեցին միանգա-
մայն արդիական և ստացան համաժողովրդական լայն արձագանք: Սա նշանակում
էր, որ մեր գրողներից շատերին պակասել էր քաղաքացիական արիությունը: Իսկ
այդ առումով լավագույն ավանդույթներ է թողել դարձյալ մեծ Չարենցը: Նրա հռչակ-
ված, կողոպտված ու կորստյան մատնված ձեռագրերի բեկորները և մի քանի հայրե-
նասեր մարդկանց ջանքերով փրկված գործերը հաստատում են հանճարեղ բանաս-
տեղծի ինքնայրումը, անուրանալի խիզախությունը՝ իր կյանքի ծանրածանր շրջա-
նում՝ 30-ական թվականների կեսերին:

Սա չի նշանակում, իհարկե թե հայ գրողները բոլորովին անտարբեր կամ չեզոք
են պահել իրենց, ասենք, անհատի պաշտամունքի տարիներին կամ նրանից հետո:
Գ. Մահարու, Մ. Արմենի, Ս. Ղազարյանի սիբիրյան ստեղծագործությունները, Պ.
Սևակի անգուգական պոեզիան, Սուրեն Այվազյանի «Բարի առավոտ», Զ. Թափալց-
յանի «Պատերազմ», Ա. Մահիկյանի «Կարոտ», Խ. Դաշտենցի «Մողեղան» և «Ռանչ-
պարների կանչը» վեպերը ցույց են տալիս, որ հայ գրականությունը, այնուամենայ-
նիվ, որոշ ձեռքբերումներ ունեցել է իրականությունը քննադատաբար արտացոլելու
առումով:

21. Սևակ Պ., Երկերի ժողովածու 3 հատորով, Երևան 1982-1983:
22. Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1986-1987:
23. Վեռնոյ Ա., Մայրիկ, Երևան, 1989:
24. Տերյան Վ., Երկեր, Երևան, 1989:
25. Քոչար Հր., Սպիտակ գիրքը, Երևան, 1965:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

- Պատմական ժամանակաշրջանը. Ցեղասպանության հանգամանքներն և ընթացքը. Ազգային-ազատագրական շարժումը /պատմական ակնարկ /:
- Ժամանակի պատմական իրադարձությունների արտացոլումը Ե. Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմում:
- Ստեփան Չորյանի «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպը:
- Հայոց Մեծ եղեռնը և Հովհաննես Թումանյանը:
- Կորցրած հայրենիքի թեման Ա. Բակունցի «Ծիրանի փող » ստեղծագործության մեջ:
- Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպը:
- Հոգևորի պահպանման խնդիրը Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքում:
- Ազգային-ազատագրական շարժման արձագանքները Ավ. Իսահակյանի «Հայդուկի երգերից» շարքում:
- Կորցրած հայրենիքի թեման Ա. Բակունցի «Լառ Մարգար» ստեղծագործության մեջ:
- XIX դարավերջի և XX դարասկզբի կոտորածների արձագանքները Միամանթոյի բանաստեղծական շարքերում:
- Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն:
- 1930-ական թթ. հասարակական-գաղափարական մտայնությունը, հակասությունները և դժվարությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ալազան Վ., Տառապանքի ուղիներով, Երևան, 1990:
2. Արամյան Վ., Կոլլմա, Անթիլիաս, 1994:
3. Արմեն Մ., Պատվիրեցին հանձնել ձեզ, Երևան, 1964:
4. Բակունց Ա., Երկեր, Երևան, 1999:
5. Բակունց Ա., Երկեր, 4 հատորով, Երևան, 1978-1984:
6. Դաշտենց Խ., Ռանչպարների կանչը, Երևան, 1984:
7. Զորյան Ստ., Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 3, Մի կյանքի պատմություն, Երևան, 1961:
8. Թոթովենց Վ., Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա, Երևան, 1966:
9. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, Երևան, 1988-1999:
10. Իսահակյան Ավ., Հայդուկի երգեր, Երևան, 1990:
11. Խանգաղյան Ս., Անդրանիկ, Երևան, 1989:
12. Խանգաղյան Ս., Գարեգին Նժդեհ, Երևան, 1993:
13. Կապուտիկյան Ս., Յոթ կայարաններ, Երևան, 1965:
14. Ղազարյան Ս., Դա չպետք է կրկնվի, Երևան, 1988:
15. Մահարի Գ., Երիտասարդության սեմին, Երևան, 1956:
16. Մահարի Գ., Երկերի ժողովածու, Երևան, 1966-1989:
17. Շիրազ Հովհ., Հայոց դանթեականը, Երևան, 1990:
18. Չարենց Ե., Երկերի ժողովածու, 4 հատորով, Երևան, 1986-1987:
19. Սիամանթո, Դ. Վարուժան, Երկեր, Երևան, 1979::
20. Սևակ Ռ. Երկեր, Երևան, 1985:

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 20-րդ դարասկզբի պատմական դեպքերի արտացոլմանը ժամանակակից գրականության մեջ:

Դասընթացի խնդիրները

1. Ուսանողին ներկայացնել 20-րդ դարասկզբի պատմական իրադարձությունների արձագանքները հայ գրականության մեջ: Քննել ժամանակաշրջանի հասարակական-գրական կյանքը, պարզաբանել ժամանակի գրական հոսանքները, ուղղություններն և մեթոդները:
2. Մեկնաբանել պատմական դեպքերի և գրական երկերի աղերսները, Առաջին համաշխարհային պատերազմի, Հայոց ցեղասպանության, հայրենիքի ու ազգի ճակատագրի, մարդու բարոյական անկման թեմաները և դրանց գեղարվեստական արտացոլումը տարբեր գրողների ստեղծագործություններում:
3. Բացահայտել գրական երկերի պատմական-հասարակական դերը, գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների կարևորությունը ժամանակաշրջանի գրականագիտական մտածողության մեջ:
4. Կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

ՇՐԱԳՐԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Պատմական ժամանակաշրջանը. Ցեղասպանության հանգամանքներն և ընթացքը. Ազգային- ազատագրական շարժումը: (14 ժամ)

Պատմական ակնարկ դարասկզբի իրադարձությունների և այդ իրադարձությունների արտացոլմանը հայ գրականության մեջ: Հայոց Մեծ եղեռնի արձագանքները արևմտահայ բանաստեղծների, Հովհ. Թումանյանի, Եղ. Չարենցի ստեղծագործություններում: Միամանթոյի բանաստեղծական շարքերը: Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուն: Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն, հողվածներն ու նամակները: Եղ. Չարենցի «Դանթեական առասպել», «Կապուտաչյա հայրենիք» պոեմները: Հոգևորի պահպանման խնդիրը Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքում: Ազգային-ազատագրական պայքարը և նրա արձագանքները Ավ. Բասիակյանի «Հայդուկի երգեր» շարքում:

Մեմինար պարապմունքների թեմաներ

1. Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն:
2. Միամանթոյի բանաստեղծական շարքերը:

Ակնկալվող արդյունքները (թեմայի ուսուցման ավարտին)

Թեմայի ավարտին ուսանողը կիմանա դարասկզբի պատմա-քաղաքական, հասարակական կյանքի, Մեծ եղեռնի, ինչպես նաև հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը և այդ դեպքերի **արտացոլումը** հայ գրականության մեջ: Կկարողանա զուգահեռներ անցկացնել պատմական իրադարձությունների և այդ իրադարձություններն արտացոլող գեղարվեստական երկերի միջև: Կտիրապետի 20-րդ դարասկզբի հասարակական-քաղաքական իրավիճակին, գրական-գեղարվեստական կյանքին և հայ գրականության հետագա շրջափոխներում այդ ժամանակահատվածի պատմական դեպքերի արձագանքներին:

Թեմա 2. 1930-ական թթ. Հասարակական-գաղափարական մտայնությունը, հակասությունները և դժվարությունները:

(8 ժամ)

1930-ական թթ. հասարակական-գաղափարական մտայնությունը, հակասությունները և դժվարությունները: Ժամանակի պատմական իրադարձությունների արտացոլումը Ե. Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմում: Կորցրած հայրենիքի թեման Ա. Բակունցի ստեղծագործություններ

11. Ֆիդայական ազատամարտի պատկերումը Ավ. Բասիակյանի «Հայդուկի երգերից» շարքում:
12. 1930-ական թթ. հասարակական-գաղափարական մտայնությունը, հակասությունները և դժվարությունները:
13. Ինքնակենսագրական վեպը՝ որպես ապրածի վերարտադրություն:
14. Անհատի պաշտամունքի տարիների սահմանափակումների, կաշկանդումների և դաժանությունների անդրադարձները հայ գրականության մեջ:
15. Անհատի պաշտամունքի քննադատությունը Գուրգեն Մահարու «Նախօրյակին» պատմվածաշարում:
16. Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը:
17. Կորցրած հայրենիքի թեման Հրաչյա Քոչարի «Սպիտակ գիրքը» ժողովածուում:
18. Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպապոեմ:
19. Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Պարույր Սևակի պոեմներում:
20. Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Հովհաննես Շիրազի ստեղծագործություններում:
21. Հայ ժողովրդի պատմական ճակատագրի թեման Սիլվա Կապուտիկյանի քնարերգության մեջ:
22. Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպում:
23. Ազգային-ազատագրական պայքարի անդրադարձները Մերո Խանգաղյանի պատմավեպերում:

15. Հայության ճակատագրի թեման Հր. Քոչարի <<Սպիտակ գիրքը>> ժողովածուում:
16. Եղեռնի արձագանքները <<Կարոտ>> վիպակում:
17. Եղեռնի արձագանքները <<Նահապետ>> վիպակում:
18. <<Օտակած փշալարերի>> թեման հայ գրականության մեջ:
19. Պ. Սևակի <<Անլռելի զանգակատուն>> պոեմի գաղափարական արժանիքները:
20. Եղեռնի անդրադարձները Հովհ. Շիրազի <<Հայոց դանթեականը>> պոեմում:
21. Հայ ժողովրդի պատմական ճակատագրի թեման Ս. Կապուտիկյանի քնարերգության մեջ:
22. Ազգային-ազատագրական պայքարի արտացոլումը Խ. Դաշտենցի <<Խողեղան>> և <<Ռանչպարների կանչը>> վեպերում:
23. Ազգային-ազատագրական պայքարի անդրադարձները Ս. Խանգաղյանի արձակում:

ՌԵՖԵՐԱՏԻ ՄՈՏԱՎՈՐ ԹԵՄԱՏԻԿԱ

1. Ցեղասպանության հանգամանքներն և ընթացքը. Մեծ եղեռնի անդրադարձները հայ գրականության մեջ:
2. Ազգային-ազատագրական շարժման արձագանքները գեղարվեստական գրականության մեջ:
3. Հայոց Մեծ եղեռնը և Հովհաննես Թումանյանը:
4. Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն:
5. Հոգևորի պահպանման խնդիրը Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքում:
6. XIX դարավերջի և XX դարասկզբի կոտորածների արձագանքները արևմտահայ գրականության մեջ:
7. Դարասկզբի պատմական դեպքերի անդրադարձները Ե. Չարենցի «Խմբավետ Շավարշը» պոեմում:
8. Եղեռնի թեման Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում:
9. Կորցրած հայրենիքի թեման Ա. Բակունցի ստեղծագործություններում:
10. Ձոհված հերոսների հիշատակի ներբողումը Ավ. Իսահակյանի «Հայդուկի երգերից» շարքում:

Մեմինար պարապմունքների թեմաներ

1. 1930-ական թթ. Հասարակական-քաղաքական գաղափարական մտայնությունը: Գրական հոսանքներ, մեթոդներ, ուղղություններ: Գրական խմբակները և նրանց դերը գրականության զարգացման գործում:

Ակնկալվող արդյունքները (թեմայի ուսուցման ավարտին)

Թեմայի ավարտին ուսանողը կիմանա հայ գրականության ամենաբարդ ու ողբերգական մի ժամանակահատվածի՝ 30-ական թթ. հասարակական-քաղաքական իրավիճակը, կկարողանա վերլուծել և գնահատել 20-րդ դարասկզբի հայ գրականության մի նոր շրջանը սկզբնավորող և նրա զարգացման ընթացքն ապահովող դասական հեղինակների գործերը, տեսնել յուրաքանչյուր գրողի տեղն ու դերը տվյալ շրջանի գրականության զարգացման շրջայի մեջ: Կտիրապետի այդ շրջանի անվանի գրողների (Եղ. Չարենց, Ավ. Բակունց, Ն. Չարյան, Գ. Մահարի) ստեղծագործություններին:

Թեմա 3 Ինքնակենսագրական վեպը՝ որպես սպրվածի արտահայտություն:

(6 ժամ)

30-ական թվականներին մեր գրականության մեջ նշանակալի աշխուժություն ապրեց ինքնակենսագրական վեպը (Գ. Մահարի, Վ. Թոթովենց, Ստ. Ջոռյան, Զ. Եսայան): Այս հեղինակներից յուրաքանչյուրը բերում էր մի ուրույն աշխարհ, իր տեսած ու ապրած Հայաստանի, իր սերնդի դառը ճակատագրի պատկերը, որի շնորհիվ էլ նրանց կյանքի պատմությունը ձեռք է բերում նաև հասարակական հետաքրքրություն:

Մեմինար պարապմունքների թեմաներ

1. Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ» ինքնակենսագրական վեպը:

Ակնկալվող արդյունքները (թեմայի ուսուցման ավարտին)

Թեմայի ավարտին ուսանողը կիմանա 30-ական թվականներին մեր գրականության մեջ նշանակալի աշխուժություն ապրած ինքնակենսագրական վեպի նմուշների, դրանց ծնունդն նախանշած գրական-հասարակական պատճառներին, ժողովրդի պատմության մի շարք սոցիալ-քաղաքական երևույթների մասին: Կկարողանա գնահատել գրական երկերի պատմական-հասարակական դերը, գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների կարևորությունը ժամանակաշրջանի գրականագիտական մտածողության մեջ: Ձուգահեռներ

կանցկացնի անհատի պաշտամունքի տարիների պատմական իրադարձությունների և այդ իրադարձություններն արտացոլող գեղարվեստական երկերի միջև: Կտիրապետի անհատի պաշտամունքի տարիների և նրա կործանարար հետևանքների մասին պատմող հայ հեղինակների ստեղծագործություններին:

ԹԵՄԱ 4. Անհատի պաշտամունքի տարիների

սահմանափակումները, կաշկանդումները և դաժանությունները:

(6 ժամ)

1930-ական թվականների կեսերից հայ գրողներից շատերը ենթարկվում են հալածանքների ու բռնությունների: Հալածանքները այնպիսի չափեր են ընդունում, որ այլևս կասկած չէր մնում «պետական մասշտաբային արշավի» մասին: Արշավ գրականության դեմ, ազատ ու համարձակ խոսքի դեմ, ի վերջո՝ անհատ գրողների դեմ: Գրականությունն ու արվեստը, ամբողջ մշակույթը, մամուլը պետական օրգանները առան աքցանների մեջ: Խաթարվեցին մարդկային առօրյա հարաբերությունները, սոցիալական ու քաղաքական ճնշումները դարձան կենցաղ:

Տխուր ճակատագիր վիճակվեց անխառն երգիծաբան, Պարոնյանի և Օտյանի ավանդները շարունակող Լեո Կամսարին: Ապա հաշվեհարդար տեսան Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Ջապել Եսայանի դեմ, արտրվեցին Մահարին, Արմենը, Ալազանը, Նորենը և էլի շատ գրողներ ու մտավորականներ: Սիբիրյան «ծաղկած փշալարերի» ետևում, սառցեղեն պայմաններում շուրջ երկու տասնամյակ բանտված մնացին արտրական գրողների գեղարվեստական շատ ծրագրեր ու մտահղացումներ:

Այս քաղաքականությունը իրենց գեղարվեստական արտացոլումը գտան Գ. Մահարու , Մ. Արմենի, Ս. Ղազարյանի սիբիրյան ստեղծագործություններում, Պ. Սևակի անգուգական պոեզիայում, Մուրեն Այվազյանի «Բարի առավոտ», Բ. Թափալցյանի «Պատերազմ», Ա. Սահինյանի «Կարոտ», Խ. Դաշտենցի «Նոդեղան» և «Ռանչպարների կանչը» վեպերում:

Մեմինար պարապմունքների թեմաներ

1. Վահրամ Ալազան. «Տառապանքի ուղիներով» վիպակը:
2. Անահիտ Սահինյանի «Կարոտ» վեպը:

Ակնկալվող արդյունքները (թեմայի ուսուցման ավարտին)

Ուսանողը կիմանա անհատի պաշտամունքի տարիների բռնությունների, կաշկանդումներին, պետական ապարատի կողմից ժողովրդի առաջադեմ մարդկանց ծրագրավորված մեկուսացմանը, անվանի գրողներից շատերի եղերական ճակատագրի մասին: Գկարողանա կատարել ինքնուրույն եզրահանգումներ, գնահատել անհատի պաշտամունքի տարիների բացասական ազդեցությունը հայ գրականության վրա: Կտիրապետի հետագայում, անհատի պաշտամունքի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- ինքնուրույն , ստեղծագործական աշխատանքներ,
- ուսանողական զեկույցներ, զեկուցումներ,
- մշակումներ,
- ռեֆերատներ,
- գործնական աշխատանքների ներկայացումներ:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԱՎՈՐ ԹԵՄԱՏԻԿԱ

1. Հայ գրականությունը 20-րդ դարասկզբին. Գրական ուղղություններ և հոսանքներ:
2. Թումանյանի հայրենիքի քնարը (<<Հայրենիքիս հետ>> ժողովածուն):
3. Փիլիսոփայական խոհը Թումանյանի քառյակներում:
4. Իսահակյանի ազգային-ազատագրական քնարերգությունը:
5. Հոգևորի պահպանման խնդիրը Վ. Տերյանի քնարերգության մեջ:
6. Միամանթոյի բանաստեղծական շարքերը:
7. Ջարդի տեսարանները Միամանթոյի <<Կարմիր լուրեր բարեկամես>> շարքում:
8. Դ. Վարուժանի <<Ցեղին սիրտը>> ժողովածուի կառուցվածքը և շարքերի բնութագիրը:
9. 20-րդ դարի 30-ական թվականների հասարակական քաղաքական կյանքը:
10. Դարասկզբի պատմական իրադարձությունների արձագանքները Ե. Չարենցի պոեմներում:
11. Կորուսյալ հայրենիքի թեման Ա. Բակունցի ստեղծագործություններում:
12. Գ. Մահարու ինքնակենսագրական եռագրությունը:
13. Ժամանակի ոգին Վ. Թոթովենցի ինքնակենսագրական վեպում:
14. Զ. Եսայանի <<Սիլիտհարի պարտեզներ>> ինքնակենսագրական վեպը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԵՐ

- տեսողականացման միջոցներ՝ համակարգիչ, պրոեկտոր, էլեկտրոնային գրատախտակ,
- դիտակտիկ նյութեր, գրական-գեղարվեստական երկերի բնագրեր, գրական հանդեսներ և ամսագրեր:

2. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն,
- ՀՀ «Լեզվի մասին օրենք»,
- ԵՊՀ ԻՄ Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք
- դասագրքեր, ուսումնական նյութեր և ուղղորդիչ տեքստեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, վերլուծական գրականություն, դասախոսությունների սղագրեր,
- ուսումնական դասագրքեր և մասնագիտական գրականություն,
- գեղարվեստական երկերի հիման վրա նկարահանված ֆիլմեր պարունակող DVD սկավառակներ:

քննադատումից հետո գրված, այդ ողբերգական տարիների կյանքը պատկերող ստեղծագործություններին:

ԹԵՄԱ 5. Հետագա անդրադարձները պատմական դեպքերին:

Ցեղասպանության և պատմական դեպքերի արտացոլումը ժամանակակից գրականության մեջ:

(10 ժամ)

Հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգությունը անհնար էր մատնել մոռացության: Չնայած այն փաստին, որ անհատի պաշտամունքի տարիներին արգելված էր անդրադարձնալ ազգային թեմաներին հայ գրողները, երբեմն Հայրենական պատերազմի քողի տակ, երբեմն ստեղծագործությունների տողատակում, բայց, այնուամենայնիվ, անդրադարձում էին մոտ մեկ և կես միլիոն հայերի ջարդին: Եղեռնի թեման կարմիր թելի նման անցնում են Պ. Սևակի, Հովի Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Վ. Դավթյանի քնարերգությունում, Հր. Քոչարի, Խ. Դաշտենցի, Ս. Գալշոյանի, Հ. Գրիգորյանի, Ա. Այվազյանի, Ս. Խանգաղյանի արձակում:

Մեմինար պարապմունքների թեմաներ

1. Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Սիլվա Կապուտիկյանի քնարերգության մեջ:
2. Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպում:

Ակնկալվող արդյունքները (թեմայի ուսուցման ավարտին)

Կիմանա հայոց Մեծ եղեռնի շուրջ ստեղծված մեծածավալ գրականությանը, կիսականա, որ պատմական ճշմարտությունը ցույց տալուց և հաստատելուց զատ փաստում է մի շատ կարևոր իրողություն, այն, որ թուրքը միշտ էլ մնում է թուրք, և ոչ մի քաղաքակրթություն չի գորու չէ նրան փոխելու, որովհետև բարբարոս, վայրենի, զագանային և անասնական կերպն ու էությունը նրա մեջ դրված են ի սկզբանե և ի վերուստ, հետևաբար՝ ընդմիշտ... Կկարողանա կատարել ինքնուրույն վերլուծություններ, գնահատել եղեռնի արձագանքները հետագա շրջանի հայ գրականության մեջ Կտիրապետի 20-րդ դարասկզբի հասարակական-քաղաքական իրավիճակին, գրական-գեղարվեստական կյանքին և հայ գրականության հետագա շրջափուլերում այդ ժամանակահատվածի պատմական դեպքերի արձագանքներին:

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

N	Բաժինը, թեման	Պարապմունքի տիպը Ժամերի քանակը					
		դասախոսություն	սեմինար պարապմունք	Գործնական պարապմունք	Լաբորատոր պարապմունք	Ուսումնական պրակտիկա	Ինքնուրույն աշխատանք
1	Ներածություն	2					
2	<p>ԹԵՄԱ 1 Պատմական ժամանակաշրջանը. Ցեղասպանության հանգամանքներն և ընթացքը. Ազգային-ազատագրական շարժումը:</p> <p>1. Պատմական ակնարկ: 2. Հայոց Մեծ եղեռնը և Հովհաննես Թումանյանը: 3. Հոգևորի պահպանման խնդիրը Վ.Տերյանի «Երկիր Նաիրի» շարքում: 4. XIX դարավերջի և XX դարասկզբի կոտորածների արձագանքները արևմտահայ գրականության մեջ: 5. Եղեռնի թեման Եղ. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում: 6. Ազգային-ազատագրական շարժման արձագանքները Ավ. Իսահակյանի «Հայդուկի երգեր» շարքում:</p>	14	4			10	
		2					
		4	2			2	
		2					
		2	2			2	
		2				2	
		2				2	

- գնահատման գործիքներ՝ ցուցիչներ և չափանիշներ,
- գնահատման ձևեր՝ ռեֆերատ, ընթացիկ ստուգում, գործնական աշխատանքներ՝ դասապլանի կազմում, ուսուցման գործընթացի պլանավորում,
- գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքներ (առավելագույնը 18), դասընթացի հաճախումների համար տրվող միավոր (առավելագույնը 2),
- գնահատման գործիքներ՝ յուրաքանչյուր ընթացիկ ստուգման համար 9 միավորանոց սանդղակ և գիտելիքների, ակտիվության, ինքնուրույն աշխատանքների կատարման մակարդակ, հաճախումների բաղադրիչներ,
- եզրափակիչ ստուգումն անցկացվում է գրավոր, հարցատոմսն պարունակում է 3 հարց՝ յուրաքանչյուրը 3-ական միավոր, քայլը 0.5,
- գնահատման համար պահանջվող փաստեր՝ ռեֆերատ, սեմինար պարապմունքների գնահատականներ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ)

ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ուսումնառության արդյունքում ուսանողը պետք է՝

Գիտենա՝ 20-րդ դարասկզբի պատմա-քաղաքական իրավիճակը (դրությունը Արևելյան և Արևմտյան Հայաստանում, հայոց հարցի նախապատմությունն ու ընթացքը, հայոց ցեղասպանության կազմակերպման նախադրյալներն ու հետևանքները և այդ դեպքերի արտացոլմանը հայ գրականության մեջ): Կիմանա դարասկզբի գրական-գեղարվեստական հոսանքները, ուղղությունները, մեթոդները: Կտեղեկանա անհատի պաշտամունքի տարիների և նրա կործանարար հետևանքների մասին: Կճանոթանա վերապրող ժողովրդի՝ եղեռնի թեմայով գրված ժամանակակից գրականությանը: Կհասկանա գրականության ազգայահպան գոյության անհրաժեշտությունը

Կարողանա՝ տեսական-գրական գիտելիքների օգնությամբ կատարել գեղարվեստական ստեղծագործությունների ու գրական կերպարների գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ, արժևորել գրական երկը: Կհասկանա գրական երկերի պատմական-հասարակական դերը, գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների կարևորությունը ժամանակաշրջանի գրականագիտական մտածողության մեջ: Կկարողանա վերլուծել և գնահատել 20-րդ դարասկզբի հայ գրականության մի նոր շրջանը սկզբնավորող և նրա զարգացման ընթացքն ապահովող դասական հեղինակների գործերը, տեսնել յուրաքանչյուր գրողի տեղն ու դերը տվյալ շրջանի գրականության զարգացման շղթայի մեջ: Զուգահեռներ կանցկացնի պատմական իրադարձությունների և այդ իրադարձություններն արտացոլող գեղարվեստական երկերի միջև:

Տիրապետի՝ դարասկզբին երևան եկած գրական հոսանքներին, մեթոդներին, ուղղություններին: Կտիրապետի 20-րդ դարասկզբի հասարակական-քաղաքական իրավիճակին, գրական-գեղարվեստական կյանքին և հայ գրականության հետագա շրջափուլերում այդ ժամանակահատվածի պատմական դեպքերի արձագանքներին:

	ԹԵՄԱ 2. 1930-ական թթ. Հասարակական-գաղափարական մտայնությունը, հակասությունները և դժվարությունները:	8	2				10
3	1. 1930-ական թթ. հասարակական-գաղափարական մտայնությունը, հակասությունները և դժվարությունները:	4	2				4
	2. Ժամանակի պատմական իրադարձությունների արտացոլումը Ե. Չարենցի «Խմբավերջավարջը» պոեմում:	2					2
	3. Կորցրած հայրենիքի թեման Ա. Բակունցի ստեղծագործություններում /Օլիբանի փող, Լառ Մարգար, Քեռի Դավո/:	2					4
	ԹԵՄԱ 3. Ինքնակենսագրական վեպը՝ որպես ապրվածի արտահայտություն:	6	2				10
4	1. Գուրգեն Մահարի, «Շռագրություն»:	2					4
	2. Վահան Թոթովենց, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»:	2					2
	3. Զապել Շապյան, «Միլիտարի պարտեզները»:		2				2
	4. Ստեփան Զորյան, «Մի կյանքի պատմություն»:	2					2

5	ԹԵՄԱ 4. Անհատի պաշտամունքի տարիների սահմանափակումները, կաշկանդումները և դաժանությունները:	6	4				10
	1. Գուրգեն Մահարի, «Նախօրյակին» պատմվածաշարը, «Ծաղկած փշալարեր» վիպակը:	2					2
	2. Վահրամ Ալազան. «Տառապանքի ուղիներով»:		2				
	3. Մկրտիչ Արսեն.	2					2
	4. Պատվիրեցին հանձնել ձեզ»:	2					2
5. Սուրեն Ղազարյան. «Ղաչպետք է կրկնվի»:	2					2	
	5. Անահիտ Սահիպան. «Կարոտ»:		2				2

6	ԹԵՄԱ 5. Հետագա անդրադարձները պատմական դեպքերին: Ցեղասպանության և պատմական դեպքերի արտացոլումը ժամանակակից գրականության մեջ:	10	4				16
	1. Ցեղասպանության անդրադարձները Պարույր Մևակի պոեմներում:	2					2
	2. Եղեռնի թեման Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմում:	2					2
	3. Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Միլվա Կապուտիկյանի բանաստեղծություններում:		2				2
	4. Ազգային-ազատագրական պայքարի անդրադարձները Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքում:	2					2
	5. Կորցրած հայրենիքի թեման Հրայրա Քոչարի «Նահապետ» և «Կարոտ» վիպակներում:	2					2
	6. Հայոց Մեծ եղեռնի անդրադարձները Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպում:		2				2
7. Ազգային-ազատագրական պայքարի անդրադարձները Մերո Խանգաղյանի «Աղդրանիկ» և «Գարեգին Նժդեհ» պատմավեպերում:	2					4	
7	Ընդամենը	48	16				56